



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊՐՈՑ. Հ. ԱՇԽԱՅԱՆ

(Հայկական ՍՍՌ Գիտությունների  
ակադեմիայի խորհրդական անդամ)

## ՀՈՒՇԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ՝

ոմիտասի Հետ, 1897 թվականին  
սկսյալ, երեք տարի շարունա-  
կաբար պաշտոնավարած ենք  
էջմիածնի Գեղրդան ճեմարա-  
նը: Եվ ապրելով նույն սենյակին մեջ, ես  
մոտեն ճանչցա անոր Նկարագրի զերր:

Կոմիտաս մարդկացին բացառիկ առարի-  
սություններու ծով էր: Զարգացանց աշխա-  
տասեր էր ան, աննկուն կամքի տեր, ան-  
կեղծ, բարեհոգի, մարրակլուն և մեծ հայրի-  
նասեր: Բացի իր երսժշտական հանճարեն,  
ան ուներ նաև բովստի շնորհքներ — բա-  
նաստեղծ էր և ձարտար կոմիկ (երպիծող)՝  
դերասան մը, որ ֆարսի (զավիշտի) մեջ այ-  
մեզ հայտնի էր: Առա թե ինչո՞ւ ան օճճա-  
րանի մեծին ու փոքրին սիրելին էր դարձած:

Կոմիտաս բացառիկ ախորժելի ձայն մը  
ուներ, որուն համար երիմյան Հայրիկի  
մասնավոր համականոնին էու առժանառած

Հայրիկի կարգադրությամբ, ան կղեկավա-  
րեր վանքի դպրաց դասր և պատասխանա-  
տու էր նաև պատարագի՝ սուրբ Խորանին  
երգված սարկավագի բաժնին և ավետա-  
րաններու ընթերցման կանոնավորության:

Անդամ մը Ս. Սարգսի տոնին, եկեղեցին  
ավարտելեն վերջ, Հայովելը ուզեց Կոմիտա-

սին անձամբ Հայտնել իր շնորհակալությունը օրվան եկեղեցական երգեցզության լավ կազմակերպման և Կոմիտասի այնքան քաղցրը երդիլուն Համար: Եվ Հայրիկը շուտով Կոմիտասը կանչել տվալ մոտք: Անշուշտ, մեծ էր Կաթողիկոսի հրամանը: Ծեմարանի ուսուցիչ և ուսանող աշու ձախ ինձկանք, բայց Կոմիտասը շցտանք:

Այդ օրը, Ս. Գևորգի տառախմբության  
առթիվ, վանքի և շրջապատի մեջ հավաքվեր  
էին Հայոստանի շրջաններն տասնյակ հա-  
զարավոր ուժատավորներ, որոնք ավանդո-  
կան սովորության համաձայն մատաղի  
սեղաններ բացած, կզվարճանալին: Դու-  
զունայի երաժշտությունը կլեցներ օգոս Ժո-  
ղովրդական երգն ու պարը զվարթ մթնորոտ  
մը կտաեղծեին:

Կոմիտասի անհայտանալու լուրը հասավ  
վեհի ականջը:

Ուշ երեկո էր, երբ Կոմիտաս, Ճեմարանի կոտորենի հջնելով, մտավ սենյակ և ուրախության բացադառնչություններով ցույց տվավ այդ օր իր հավաքած ժողովրդական երգերն ու պարերները, որոնք ձախնագրած էր հայկական ձայնանիշերով։ Երբ թիւ վերջը Վեհափառ Հայրիկի բով դացինք, վրոգված զտանք զինքը՝ Կոմիտաս ծունդի եկավ անոր առցել և Աջը ամեներով բասավ. «Եթի Վեհց ցանկանա, մեղքերս շատ շուտ կբավիմ, Հիմա իսկ երգելով այսօք իմ հավաքած ժողովրդական երգերեն»։ Եվ Նրիմյան Հայրիկի ներողամիտ հայացքին տակ, Կոմիտաս երդեց իր ձայնագրած ժողովրդական երգերեն՝ մեծ հաճույք պատճառելով Վեհափառին։ Այդ անմոռանալի օրին վերջ, Նրիմյան Հայրիկի հրամանով ամեն տապալարի, հետ պատարագի, Կոմիտաս ալգատ կշրջեր ժողովուրդին մեջ, ծառայելով իր նպատակին։

1. Համագործական պատմելի է տիկին Աղասի Մեսրոպյանին՝ ու այս հուշերը պատմել է տիկին Աղասի Մեսրոպյանին՝ տիկին Աղասի ու գործունեությունը» աշխատության «ուշացին բաժնում» Ընդուառելով խմբագրության խնդրանքին, տիկին Մեսրոպյանը սիրահոճար տրամադրեց այն տպագրեցու մեջ ամսադրումը, Անառանը ինևելով Հայրենակից տիկին Մեսրոպյանին, սովորությունը է ունեցել նրա հետ խոսել Պալսի բարբառով, որով և պատմել է իր ներկա հուշերը— ԽԵՐ.

Կոմիտաս մեծ լինթերցասեր մըն էր: Հաւերեն լեզուն՝ աշխարհաբար և գրաբար, աղեկ գիտեր, կհետաքրքրվեր ժամանակի լավագույն հայ ամսաթերթերով և մասնավորապես կերպար Մովսես Խորենացին, Նարեկացին, Եղիշեն, Աբովյանի պէտք Հայաստանին և զանոնք հայ ժողովուրդի ամաստափերը կանվաներ: Կպատմեր, որ իր ուսանողական տարիներեն ինք ընտրած էր իր կյանքի ուղին: Ան հաճախ կըսեր. «Միայն երգի մը ըլլալ և չոր երաժշտական մասնագիտությունը չի բավարարեր զիս», — և վստահ շեշտով մը կավելցներ, — «Ես պիտի հասնիմ իմ բուն նպատակիս՝ հայկական երաժշտության դանձերը դուքս պիտի բերեմ հայրենի ավերակներն...»: Հայկական ժողովրդական բանահյուսության մասնավոր ժամեր կտրամադրեր և հարյուրավոր նմուշներ հավաքած էր:

Կոմիտաս բաջ պարող մըն ալ էր: Մինույն ատեն ան ձեւեր և բարրառներ հարազատորեն ընդօրինակելու բացառիկ շնորհը ուներ: Ճեմարանի մեր մտերիմ հավաքություններուն որքան հաճելի էր մեզ, երբ մեր խնդրանքին վրա, իր ծննդավայրեն սորված պարերը թե՛ կերպեր, թե՛ կպարեր, և մենք ծափերով կոգեռեինք իր մատներու շխկշբիկոցները իր բազմաձև ճոճումներուն մեզ: Տղամարդոց հայտնի հայկական ժողովրդական պարերեն առհավետ անմոռանալի կմընացորդը խիզախ ու խրոխտ պարը, որ սուրը ձեռքին, ծանր ճոճումներով և մարտական ձեւերով կպարեր: Նույնական շինական կիներու պարերները, որոնք կպարեր իրենց ծայնի հարազատ ելեէջներով և մարմնի ու ձեռքերու նրբին արտահայտություններով, հավետ անմոռանալի կմնան:

Կոմիտաս հոգատար էր իր առողջության: Ան կսիրեր վաղ արշալոյսին և երեկոյան արևամուտի ժամանակ դաշտային պտույտները և կըսեր. «Ես սակավ ուտելիթով կապշիմ, բայց առանց մաքուր օդ ծծելու երբեք»: Կոմիտաս բժախնդիր էր մաքրության. իր թխորակ գեմքը, ու մազերը մաքրության մեջ կփայլեին: Մեծ խամացք կտաներ իր հակուստներուն մաքրության: Հաճախ երբ միասին դաշտային պտույտները կվերաբառնայինք, մինչև որ սառնորակ չուրերով Ավացվեր չէր հանգատանար:

Սաքրասեր Կոմիտաս ճանճի ոխերիմ թըշնամի էր: Բացի սենյակին պատուհաններեն, դուռն ալ բարակ շղարշով փակած էր: Կարժեր տեսնել գինքը, երբ հանկարծակի կատակալի բառերով կհարձակեր դռնեն ներս մտնողին վրա պոռալով. «Ծո՞ւտ, շո՞ւտ մտիր»: Եվ եթե այդ միջոցին ճանճ մըն ալ ներս մտներ, ան չէր հանգատանար, մինչև որ դուրս չհաներ զզվելի միջատը, և բռնը-

ված ճանճը անիծելով, կըսեր. «Ի՞նչ, նորին նոտաներուս պրագրի և եկար...»: Անդամ մըն ալ մեր սենյակին մեկ ճանճը սատկեցնելու համար, ապակին կոտրեց և իր սրա. միտ խոսքով ըրածը արդարացուց բակով. Այս անիծյալ ճանճը իր միկրորով մեր երկուքին գլուխը կարող էր ուտել...»:

Կոմիտասի ամենասիրած գյուղերեն մեկն էր Քանաքեռը. թե՛ Աբովյանի տնակը, թե՛ զյուղեն զիտված հայրենի անհորիզոն տարածությունները կովկորեին իր երգելու տրամադրությունները: Ես այնքան հավատակված էի իր քաղրածայն երգերեն, որ երբեք չէի մերժել միասին Քանաքեռ երթալ, հակառակ անոր, որ ես իրեն պես մղոններ քայլելու համար տոկուն և առուց չէի: Այդպիսի օրեր, ներշնչվելով, անվերջ կերպեր և հայրենի բնության զիմաց բանաստեղծություններ կհորիներ և երբ իր բանաստեղծություններ կդորիներ և երբ իր բանաստեղծական շնորհը կգովիճի, ինքինքը կհեգներ և իր կուշտ ծիծաղի խրոխտ ձայնը կարձագանքեր մեր շուղը:

Անդամ մը, գարնանային արևածագին հետ ծիմարանեն ճամբա ելանք դեպի Քանաքեռ, այցելելու հաշտառը Աբովյանի տնակը: Այդ օրը սովորականեն ավելի երկար տևեց մեր ճամբորդությունը: Կոմիտաս հանկարծական որոշեց միհացալ ուժերով դաշտային ծաղիկներեն փունչ մը կազմել և նվիրել ի հիշատակ Աբովյանին: Որքան անմոռանալի էր անոր ոգմորությունը, երբ երեխայի մը պես կթոշկուտեր աշ ու ձախ դաշտային արահետներու երկայնքին, ամեն մեկ նոր ծաղիկի մը տեսքին իր հզոր ձայնով ինձ ալ իր մոտ կանչելով: Կեսօրին հասանք Աբովյանի տնակը: Հությունը համատարած էր այնտեղ: Կոմիտաս մեր միհացալ փունչերը գուրգուրանքով տեղավորեց տնակի պատուհանին առջև: Ինչպես միշտ, նորեն շրջեցանք տնակին բոլոր տիքը, նստանք անոր մուտքի սանդուխներուն վրա և մեր խոհերուն հետ նախաճաշեցինք: Կոմիտասի փափառով բարձրացանք տնակի կտորը: Գարնանային զարթոնքը զարդարեր էր անոր անմահությունը: Թոշուներու երամակներ կճռվողեին մեր շուղը: Կոմիտաս իր ապրումներու ամենազերմ հուզումով երգեց «Ո՛վ մեծասքանչ դու լիզուն...»: Անոր հզոր ձայնը արձագանքեց ամեն կողմ: Մեր վերաբարձին, դուռ ու դրացի, նեղիկ փողոցներու տնակներու շեմքերուն առջև հավաքված, իրարու կրացատրեին անոր էջմիածնի վանքին ձայնեղ Կոմիտասը ըլլալը:

Աշնանային օր մըն ալ Քանաքեռի բարձումքին նստած կհիանայինք մեր առջև պարզված բնության տեսարաններու վրա: Հանկարծ մոտակա ձորեն աղջկան մը գեղջուկ մեկ երգին ձայնը առինք: Կոմիտաս,

ըստ իր սովորության, գրալանեն թուղթի կտոր մը և մատիտ մը հանեց և սկսավ հայկական ձայնանիշերով նոտազրել:

Երեկոյան մեր ձեմարան վերադարձին ընթրիքի ժամն էր, և մեր ամբողջ օրվան երեկար ճամբորգութեննեն վերջ անդիմադրելիուրին սրված էր մեր ախորժակը: Բայց ի՞նչ զարմանք. Կոմիտաս տեսրակ մը բերելով, սկսավ իր ձայնադրած երգը մաքորի առնել: Երբ առաջարկեցի իրեն ձաշել և հնատ աշխատիլ, ան պատասխանեց. «Մինչև մարուրի շառնեմ երդի ելեկչները, փշրանք մը մըն ալ կոկորդս վար չերթար»: Ես այդ օրը համկրցա, որ Կոմիտաս սովորական մահկանացու մը չեր:

Կոմիտաս օր մը ինծի ըստավ. «Հայկական 50 հատ խազ կա: Ես կեարծեմ, որ հայոց ձայնաշարը բանի մը ձայն կպարունակի իր մեջու Եվ ուրախությամբ վրա բերավ. «Ես դպունիքը գտեր եմ...»:

Օր մը Կոմիտասին հարցուցի, թե ինչո՞ւ հայկական ձայնանիշերով կղորեր: Ան պատասխանեց. «Եվրոպական 5 զծավոր թուղթ հանպատրաստից ես ուրկե՝ զոնեմ: իսկ հայկական ձայնանիշերը որեւէ թուղթի վրա անմիշապես կղորեմ...»:

Օր մը Կոմիտասի ինձ պոլսական շարդիներ երգել տվավ և ծոցատերին մեջ սկսավ դրել:

— Հայր սուրբ. — բախ անոր. — Եվրոպացիները արհամարհանքով կլսեն այս շարդիները և կծաղրեն:

— Առոնք հիանալի եղանակներ են և ատոնց ծնունդ տվողները հանձարներ են, — պատասխանեց Կոմիտաս:

Կոմիտաս Հակոբ Պարոնյանի երգիծարանական արվեստը այնքան կսիրեր, որ անոր դորձերն շատերը անգիր դիտեր:

Կոմիտաս և ես կոմիզմի (երգիծանքի) վարպետներ նկատված էինք: Մեր ուսուցչական հանգիստի ժամերում՝ ձեմարանի մեր ընկերներն կինոտքենիք: Երբեմն ան և ես ոգևորվելով, Պաղտասար աղքարի զատաստանական ժողովը կներկայացնեինք, և վերջի վերջո, բով-բովի, մեր բայլերը համաշափ նետելով, պոտալով զոնեն ներս կմրտնեինք:

Կոմիտաս օր մը օպերետա մը գրեց Հայր Պարոնյանի «Քաղաքավարության վնասներ»ն և աշակերտաներուն սորվեցուց: Ներկայացումը անհաջող անցավ և վատ տապարություն թողուց: Այս եղամ առաջինը և վերջինը:

Կոմիտաս սովորություն ուներ առանց բարձի, կարծր թախտի մը վրա քնանալու, մարմինը ուղիղ վիճակի մեջ պահելով:

Երեք տարվան մեջ անդամ մը միայն անսա Կոմիտասի կատաղի զայրույթը: — Ճեմարանի ցած պատշաճին մեջ Կոմիտասն ու ևս մտերմորեն կսոսեինք: Մեզմն քիչ մը անդին ուսանողները հավաքված կերպեին, իրարմն ետ ու առաջ, ցած ու բարձր ձայներով: Այդ բոպեին, առաջին անդամը ըլլալով, ևս դիտեցի անոր կատաղի բարկությունը: Մինչև օրս չեմ մոռնար ցղախնութեննեն անոր վիճ երակներուն մատնաշափ ցցվիլը:

Խմացեր եմ, որ 1906-ին Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգեն վերջ, ֆրանսացի Հայտնի կոմպոզիտոր դաշնականար կլո-Դեբուսին ծունկի գարով կհամբուրե Կոմիտասի ձեռքերը, ըսկելով. «Հանձարեկ հայր Կոմիտաս, Զեր երաժշտական հանձարե առջև կիսոնարհիմ...»:

Կոմիտասի ձայնը մեծ դիավագոն ուներ: Բնոլին զոնված միջոցին հայ ժողովրդական երգերը անձնապես ցուցադրած համերգին վերջ, Բեոլինի օպերայի տնօրենը անձնամբ կհրավիրե զինքը իրու օպերայի զիմանիոր երգի և կիսուտանա բացանիկ վճարում: Կոմիտաս կպատասխանի անոր. «Եմ երգչի կարուությունները մեջ նպատակի միայն պիտի ծառայեն — ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին»:

1899-ին Կոմիտաս էջմիածինի արտասահման երթարու ատեն, իրմե խնդրեցի, որ «Բաց նամակ» հավաքածոյին համար, անցած բոլոր տեղերեն պատկերազարդ բացիկներ ուղարկեր: Կոմիտաս հարգեց իր խոստումը. 7 հատ պատկերազարդ բաց նամակ ուղարկեց: 7-րդ բացիկը մեր սիրաչերմ ընկերական թղթակցության վերջին հիշատակը եղամ....

